

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Վարդան Բոստանջյանի և Արամ Սաֆարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝

1) նախագծի վերնագրում անհրաժեշտ է «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն և լրացում» բառերով՝ նկատի ունենալով, որ նախագծով կատարվում է մեկ փոփոխություն և լրացում.

2) օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 204.31-րդ, 204.32-րդ, 204.33-րդ հոդվածների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին՝ նկատի ունենալով, որ հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:

2. «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրում անհրաժեշտ է «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով՝ նկատի ունենալով, որ նախագծով կատարվում է մեկ փոփոխություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-873 որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

Սահմանադրական դատարանի որոշման համաձայն վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունեության և արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ խնդրին համակարգային այլ լուծումներ տալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ: Պետք է ստեղծվի վերաքննիչ վարչական դատարան, ինչը նախատեսված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերում:

Այդ առումով ներկայացված նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման պահանջներից:

Առաջարկում ենք նախագծում նախատեսել անցումային դրույթ, համաձայն որի սույն օրենքը կգործի մինչև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի ՍԴՈ-873 որոշմանը համապատասխան դատական համակարգում փոփոխություն կատարելը և դատական ակտերի բողոքարկման հիմքերը հստակեցնելը:

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նշված որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել ու շրջանառության մեջ է դրվել համապատասխան օրենքների նախագծերի փաթեթ և Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստ է համագործակցել օրենսդրական նախաձեռնության հեղինակների հետ՝ մեկ միասնական նախագծերի փաթեթի մշակման աշխատանքներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ԵՐՐՈՐԴ¹ եւ ԵՐՐՈՐԴ² բաժինները ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ԵՐՐՈՐԴ³ բաժնով.

« Ե Ր Ր Ո Ր Դ ³ Բ Ա Ժ Ի Ն

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 204³⁰. Նոր երեւան եկած հանգամանքներով կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտը եւ բողոքը վերանայող դատարանը

1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով առաջին աստիճանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

Հոդված 204³¹. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գործին մասնակցող անձինք եւ նրանց իրավահաջորդները.

2) այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու

հնարավորություն կամ նույն օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից.

3) այն անձինք, ովքեր ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք:

Հոդված 204³². Նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը

Նոր երեւան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, մասնագետի, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, կատարել են հանցավոր արարք.

4) վերացվել է այն դատական ակտը, դատավճիռը, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել տվյալ վճռի կայացման համար:

Հոդված 204³³. Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը

Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշմամբ ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

Հոդված 204³⁴. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու ժամկետը

1. Նոր երեւան եկած հանգամանքներով գործի (դատական ակտի) վերանայման բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

2. Մույն օրենսգրքի 204³³ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում վերանայման բողոք կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում:

3. Սույն օրենսգրքի 204³³ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում վերանայման բողոք ներկայացնելու եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը միջազգային դատարանի կանոնակարգերին համապատասխան այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից:

4. Դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:

Հոդված 204³⁵. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման կանոնները

Եթե սույն բաժնում նախատեսված չեն հատուկ կանոններ, ապա նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-865¹-01.04.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 134.** Վարչական գործերով դատական ակտերի վերանայման հիմքերը եւ կարգը

1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վարչական դատարանի դատական ակտը վերանայում է վճռաբեկ դատարանը:

2. Վարչական դատարանի՝ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով եւ կարգով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-865²-01.04.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 426² հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 426². Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն`

1) այդ հանգամանքի հետ առնչվող գործին մասնակցած շահագրգռված անձինք, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների.

2) այն անձինք, ովքեր օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա դրությամբ ունեցել են այդ իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն կամ նույն օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ կետերի ուժով զրկված են եղել սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից.

3) այն անձինք, ովքեր ՀՀ մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից համապատասխան դատական ակտի կայացման պահին ունեցել են միջազգային պայմանագրի պահանջներին (ժամկետներին) համապատասխան միջազգային դատարան դիմելու իրավունք.

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները:»

Հոդված 2. Օրենսգրքի 426⁴ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել օրենքը, որը կիրառվել է վիճարկվող դատական ակտը կայացնելիս.ե:

Հոդված 3. Օրենսգրքի 426⁷ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությունը հանել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի` «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԱՐՈՒՅԹԸ վերտառությամբ ԵՐՐՈՐԴ¹ ԵՎ «ՎՃԻՈՆԵՐԻ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԵՐՐՈՐԴ² բաժիններն ունեն բազմաթիվ ընդհանուր (այդ թվում` նույնական կարգավորմամբ) դրույթներ, որոնք, կրկնություններից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է միասնացնել մեկ բաժնում, ինչպես որ դա արված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12¹ բաժնում: Դա, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նույնանուն բաժինների դրույթները Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասին եւ ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. հոկտեմբերի 23-ի ՄԴՈ-833 որոշմանը համապատասխանեցնելու

հետ միաժամանակ, ավելի կոտ կղարձնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ էլ առավել կբավարարի իրավական տեխնիկայի պահանջներին, քննարկվող հարցերում կմիասնացնի Քաղ. դատ. եւ Քր. դատ. օրենսգրքերը եւ որ ամենակարեւորն է՝ հնարավորություն կտա Քաղ. դատ. օր. փոփոխվող ԵՐՐՈՐԴ³ բաժնում եւ Քր. դատ. օր. 426², 426⁴ եւ 426⁷ հոդվածներում իրացնել ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. հոկտեմբերի 23-ի ՄԴՈ-833 որոշման այն դրույթը, ըստ որի նոր հանգամանքներով բողոք ներկայացնելու իրավունքը պետք է վերապահել նաեւ քաղաքացիական ու քրեական գործերի քննությանը մասնակից չդարձված այն անձանց, ովքեր սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացման պահին ունեցել են իրենց իրավունքներն իրացնելու (պաշտպանելու) հնարավորություն, բացառել Քր. դատ. օր. 426⁷ հոդվածի 4-րդ մասի «Շահագրգիռ անձի լիազորված անձ կարող է լինել միայն փաստաբանը եւ դրույթը, մատչելի դարձնելով քրեական դատավարությունը:

Քննարկվող երկու ինստիտուտների միաբերումը համալիր եւ բանական լուծումներ է գտել Քաղ. դատ. օր. նոր ԵՐՐՈՐԴ³ բաժնում եւ Քր. դատ. օր. 426² հոդվածում, ապահովվել է միեւնոյն հարցը կարգավորող քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերի միասնականությունը:

Նշված փոփոխություններից բխող համապատասխան փոփոխություն է կատարվել նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածում, որտեղ նշված չէր, թե վարչական դատարանի դատական ակտը որ դատական ատյանն է վերանայում:

Օրինագծի սույն տեքստն արժանացել է նաեւ ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի հավանությանը: